



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2009թ. չորրորդ եռամսյակում /վերլուծություն/

2009թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 48224 գործարքներ, որոնց քանակը 2009թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 18.9%-ով, իսկ 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 16.0%-ով:

2009թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 12686 օտարման գործարքների 82.7%-ը կազմել են առուվաճառքները, 16.4%-ը՝ նվիրատվությունները և 0.9%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 37.1%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված

անշարժ գույքի 35.6%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2009թ. չորրորդ եռամսյակում, 2009թ. երրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 14.3%-ով, իսկ 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 4.1%-ով:

2009թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 65.6%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2009թ. չորրորդ եռամսյակում, 2009թ. երրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 0.5%-ով, իսկ 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել՝ 31.8%-ով:

2009թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	չորրորդ եռամսյակ 2008թ.	չորրորդ եռամսյակ 2009թ.	երրորդ եռամսյակ 2009թ.
Կենտրոն	493900	466500	451000
Արաբկիր	398300	365900	346500
Քանաքեռ-Զեյթուն	306600	276300	266500
Նոր-Նորք	269100	226600	216400
Ավան	272800	229800	221700
Էրեբունի	268600	240700	237200
Շենգավիթ	277400	241100	230300
Դավթաշեն	300500	260200	249100
Աջափնյակ	263400	230500	226700
Մալաթիա-Մեքաստիա	255900	228900	215500
Նուբարաշեն	162000	142600	138300
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	297100	264400	254500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. չորրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2009թ. երրորդ եռամսյակի համեմատ, աճել են 3.9%-ով:

2009թ. չորրորդ եռամսյակում մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1143 բնակարաններ, որոնց քանակը 2009թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 10.5%-ով, իսկ 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 5.3%-ով:

2009թ. չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		չորրորդ եռամսյակ 2008թ.	չորրորդ եռամսյակ 2009թ.	երրորդ եռամսյակ 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	141900	136700	135200
	Ապարան	36800	44600	44000
	Թալին	47800	50500	48100
Արարատ	Արտաշատ	107100	90400	85800
	Մասիս	141700	120000	115700
	Վեդի	84300	90800	87300
	Արարատ	72400	86300	85000
Արմավիր	Վաղարշապատ	177600	157900	157500
	Արմավիր	128100	117500	112000
	Մեծամոր	91300	81600	79500
Գեղարքունիք	Սևան	104400	90700	86400
	Գավառ	51600	43200	43000
	Մարտունի	72600	82000	80200
	Վարդենիս	33300	31600	32600
	Ճամբարակ	16800	18900	19200
Լոռի	Վանաձոր	103600	92100	91100
	Ստեփանավան	49500	56600	54500
	Սպիտակ	63700	76600	75000
	Ալավերդի	32900	31800	32000
	Տաշիր	33500	34900	35000
	Թումանյան	5600	6100	6100
	Շամլուղ	3200	3400	3400
	Ախթալա	13000	14100	14000
Կոտայք	Աբովյան	176300	151100	140000
	Նոր Հաճն	141800	129800	131500
	Բյուրեղավան	120300	100700	93500
	Եղվարդ	127500	121900	119800
	Հրազդան	75900	59800	59800
	Ծաղկաձոր	170000	179500	179400
	Չարենցավան	99900	76700	80800
Շիրակ	Գյումրի	121100	114400	106900
	Արթիկ	61000	56800	55500
	Մարալիկ	29400	30000	29500
Սյունիք	Գորիս	114600	138200	128500
	Կապան	107400	102100	106000
	Սիսիան	86800	81400	86000
	Մեղրի	49600	56500	55000
	Ագարակ	30300	32800	32800
	Քաջարան	53600	59100	57600
	Դաստակերտ	7000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	83800	70500	70000
	Եղեգնաձոր	106400	110300	108400
	Ջերմուկ	143700	109300	114200
Տավուշ	Դիլիջան	106000	91900	88700
	Իջևան	146800	132100	131100
	Բերդ	40600	42000	42300
	Նոյեմբերյան	31200	33300	33400
	Այրում	21100	24000	24000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2009թ. չորրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2009թ. երրորդ եռամսյակի համեմատ, աճել են 1.8%-ով:

2009թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1366 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 444, մարզերում միասին վերցրած՝ 922: 2009թ. երրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 24.0%-ով, ընդ որում, Երևանում՝ 34.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 19.4%-ով: 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 1.0%-ով, ընդ որում Երևանում՝ 63.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 14.8%-ով:

2009թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	չորրորդ եռամսյակ 2008թ.	չորրորդ եռամսյակ 2009թ.	երրորդ եռամսյակ 2009թ.
Կենտրոն	509500	472000	475600
Արաբկիր	438400	371000	365800
Քանաքեռ-Զեյթուն	325400	280000	283900
Նորք-Մարաշ	312700	279800	284700
Ավան	290700	234500	237800
Էրեբունի	290800	244700	258800
Շենգավիթ	293500	244200	245800
Դավթաշեն	324500	264700	268200
Աջափնյակ	301800	234700	251800
Մալաթիա-Սեբաստիա	295100	232500	235200
Նուբարաշեն	171000	146800	143000
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	323000	273200	277300

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. չորրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2009թ. երրորդ եռամսյակի համեմատ, նվազել են 1.5%-ով:

2009թ. չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		չորրորդ եռամսյակ 2008թ.	չորրորդ եռամսյակ 2009թ.	երրորդ եռամսյակ 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	145000	141300	137400
	Ապարան	38900	46600	46200
	Թալին	48700	51700	50700
Արարատ	Արտաշատ	112200	92200	89900
	Մասիս	142500	122800	130600
	Վեդի	91700	92400	90700
	Արարատ	73100	88000	88800
Արմավիր	Վաղարշապատ	180300	164700	169900
	Արմավիր	132500	119200	119500
Գեղարքունի ք	Սևան	106900	92700	90700
	Գավառ	55200	45900	50100
	Մարտունի	77600	83900	83100
	Վարդենիս	37100	34000	34900
	Ճամբարակ	21300	20700	21300
Լոռի	Վանաձոր	109900	95500	94900
	Ստեփանավան	53800	59800	57000
	Սպիտակ	67600	78600	77500
	Ալավերդի	37300	34500	34300
	Տաշիր	37900	37200	37200
	Թումանյան	10400	10100	10000
	Շամլուղ	7400	7400	7400
	Ախթալա	16200	18200	18200
Կոտայք	Աբովյան	192000	154100	148400
	Նոր Հաճն	144500	135900	136900
	Բյուրեղավան	121900	102500	96800
	Եղվարդ	133600	127200	121800
	Հրազդան	80600	62700	63000
	Ծաղկաձոր	271100	296700	291800
	Չարենցավան	101500	80000	86700
Շիրակ	Գյումրի	123400	116300	111300
	Արթիկ	63700	60200	57500
	Մարալիկ	32700	31400	32200
Սյունիք	Գորիս	126300	140000	130200
	Կապան	109200	105200	110600
	Միսիան	88400	84700	89100
	Մեղրի	51700	58400	56900
	Ագարակ	33300	34500	35400
	Դաստակերտ	10400	10500	10400
Վայոց Ձոր	Վայք	86800	73100	72300
	Եղեգնաձոր	110400	113500	111800
	Ջերմուկ	100100	111800	111600
Տավուշ	Դիլիջան	119300	95800	99700
	Իջևան	148000	133600	133100
	Բերդ	42500	43500	44000
	Նոյեմբերյան	36600	34800	35000
	Այրում	23000	25800	25800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2009թ. չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2009թ. երրորդ եռամսյակի համեմատ, աճել են 0.5%-ով:

Ընդհանուր առմամբ, 2009թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել են 4808 միավոր /5262.53 հա/ հողեր, որից Երևանում՝ 275 միավոր /42.08 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2415 միավոր /4922.64 հա/, որից Երևանում՝ 10 միավոր /22.59 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 1770 միավոր /208.27 հա/, որից Երևանում՝ 206 միավոր /13.77 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 511 միավոր /35.40 հա/, որից Երևանում՝ 58 միավոր /5.67 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 50 միավոր /16.61 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.05 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 53 միավոր /70.65 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 8 միավոր /0.95 հա/,
- ջրային հողեր՝ 1 միավոր /8.00 հա/:

2009թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում օտարված հողերից 4394 միավորի /5085.40 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 248 միավոր /40.26 հա/, նվիրատվության գործարքներ՝ 360 միավոր /157.96 հա/, որից Երևանում՝ 25 միավոր /1.76 հա/ և փոխանակության գործարքներ՝ 54 միավոր /19.16 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.05 հա/:

Հանրապետությունում 2009թ. չորրորդ եռամսյակում, 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 10.3%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 5.1%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 23.0%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 11.1%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Լոռու մարզում՝ 3189.05 հա, որից 3113.50 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Վաճառված հողերի քանակի 28.4% կամ 1248 գործարքներ /3624.46 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 61 գործարքներ /22.88 հա/, իսկ 71.1% կամ 3124 միավորը /1447.40 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 185 միավոր /17.36 հա/: 2009թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 22 գործարք /13.54 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքներ:

Ստորև ներկայացվում է 2009թ. չորրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	1	20.00	1	0.05	32	1.17	27	1.66	9	2.59	0	0.00	151	10.85	25	3.91
Արագածոտն	63	117.37	2	0.22	8	0.84	34	2.92	169	180.71	0	0.00	102	10.48	4	0.04
Արարատ	45	176.33	7	2.00	12	1.09	37	0.45	243	91.53	4	1.87	169	15.94	17	0.27
Արմավիր	27	50.85	6	1.73	39	1.96	28	1.48	317	364.88	0	0.00	180	18.12	16	0.50
Գեղարքունիք	7	6.10	0	0.00	179	14.31	13	5.98	216	121.13	0	0.00	64	6.85	8	2.21
Լոռի	172	2970.98	3	0.98	33	44.00	62	5.26	297	142.51	2	0.60	208	24.56	5	0.04
Վոտայք	53	80.28	10	0.54	53	3.55	63	2.19	238	139.96	4	0.44	228	19.76	24	2.98
Շիրակ	1	4.07	3	0.55	22	8.24	16	0.50	93	87.76	2	0.16	36	3.54	5	0.22
Սյունիք	4	17.18	0	0.00	0	0.00	19	0.41	60	75.54	0	0.00	11	0.83	4	0.16
Վայոց Ձոր	21	44.87	1	1.07	4	0.56	43	1.28	50	34.29	2	2.13	17	1.64	7	0.50
Տավուշ	5	1.65	0	0.00	39	2.81	17	0.74	90	34.19	1	0.09	22	1.99	3	0.03
Ընդամենը	399	3489.68	33	7.14	421	78.53	359	22.87	1782	1275.09	15	5.29	1188	114.56	118	10.86

Ստորև ներկայացվում է 2009թ. չորրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	53	2.05	1	0.05	26	0.44	26	1.56	8	20.84	1	20.00	0	0.00	6	0.74	1	0.10
Արագածոտն	1	0.001	0	0.00	0	0.00	1	0.001	105	121.17	62	117.19	2	0.22	8	0.84	33	2.92
Արարատ	6	1.74	2	1.72	0	0.00	4	0.02	95	178.13	45	176.33	5	0.28	12	1.09	33	0.43
Արմավիր	5	0.54	2	0.51	0	0.00	3	0.03	92	54.84	24	50.21	4	1.22	39	1.96	25	1.45
Գեղարքունիք	3	0.58	0	0.00	0	0.00	3	0.58	196	25.81	7	6.10	0	0.00	179	14.31	10	5.40
Լոռի	6	40.27	0	0.00	1	40.00	5	0.27	263	2980.75	171	2970.78	3	0.98	32	4.00	57	4.99
Վոտայք	25	1.05	2	0.01	6	0.37	17	0.67	149	83.67	48	78.43	8	0.53	47	3.18	46	1.53
Շիրակ	7	0.16	1	0.05	3	0.10	3	0.01	35	13.20	1	4.07	2	0.50	19	8.14	13	0.49
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	23	17.59	4	17.18	0	0.00	0	0.00	19	0.41
Վայոց Ձոր	2	0.04	0	0.00	0	0.00	2	0.04	67	47.74	21	44.87	1	1.07	4	0.56	41	1.24
Տավուշ	11	0.44	0	0.00	8	0.40	3	0.04	48	4.60	3	1.49	0	0.00	31	2.41	14	0.70
Ընդամենը	119	46.87	8	2.34	44	41.31	67	3.22	1081	3548.34	387	3486.65	25	4.80	377	37.23	292	19.66

Հանրապետությունում 2009թ. չորրորդ եռամսյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 12 գործարքներ /3.03 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2009թ. չորրորդ եռամսյակում, 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 21.2%-ով: Ընդ որում Երևանում նվազել է 42.9%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 21.0%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 18.3%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 29.9%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 44.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 66.7%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2009թ. չորրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	41	72.00	35.2	830.3	237.3	123	90.06	365.0	12000.0	4395.6
Ապարան	2	2.30	446.8	446.8	446.8	6	12.42	86.5	2727.3	544.3
Թալին	19	42.89	33.6	113.2	58.3	26	51.32	93.6	5494.5	482.1
Ծաղկահովիտ						13	26.80	79.5	1000.0	246.7
Արարատի մարզ										
Արտաշատ	3	1.17	70.0	2117.5	1434.1	87	24.47	335.1	10833.3	2104.3
Մասիս	29	77.11	10.0	2185.5	265.5	40	21.51	200.0	11904.8	2955.8
Վեդի	13	98.05	17.7	672.2	285.5	112	44.02	207.0	10795.1	1827.2
Արմավիրի մարզ										
Արմավիր	17	19.08	35.7	1604.3	220.8	177	215.53	294.3	9090.0	1156.6
Բաղրամյան	5	30.41	35.4	622.1	289.1	62	114.35	90.6	2561.1	656.6
Վաղարշապատ	2	0.72	113.6	459.7	286.7	76	33.66	444.4	11764.7	2907.3
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						150	53.60	199.8	1875.0	436.3
Ճամբարակ	6	5.80	127.0	791.0	455.1	37	27.97	60.5	953.3	247.8
Մարտունի						6	1.68	51.1	2850.0	567.8
Սևան	1	0.30	1221.0	1221.0	1221.0	7	5.90	52.2	2134.8	240.5
Վարդենիս						16	31.98	41.2	2575.1	409.9
Լոռու մարզ										
Ալավերդի						82	14.44	170.4	6424.2	925.4
Գուգարք	49	900.47	35.5	392.0	186.9	4	0.60	234.6	6065.9	1100.0
Սպիտակ	108	2031.87	27.3	1120.0	176.4	10	3.40	250.0	5555.5	615.7
Ստեփանավան	14	38.44	440.0	1197.0	674.1	17	16.74	90.6	1686.6	390.2
Տաշիր						80	59.54	45.3	1384.4	192.1
Կոտայքի մարզ										
Աբովյան	16	19.85	77.5	5203.7	690.1	108	35.85	279.3	11942.7	4691.2
Եղվարդ	19	36.82	74.3	1807.9	603.1	87	70.08	174.4	11971.8	3351.9
Հրազդան	13	21.76	60.0	848.8	475.5	41	32.32	130.5	10256.4	1583.6
Շիրակի մարզ										

Ախուրյան						35	24.62	252.0	1693.1	493.0
Ամասիա	1	4.07	122.4	122.4	122.4	2	12.84	40.9	261.0	132.5
Անի						33	41.03	110.6	546.9	276.6
Աշոցք						1	1.51	58.5	215.8	118.7
Արթիկ						22	7.76	79.4	1428.6	247.5
Սյունիքի մարզ										
Գորիս	2	13.78	217.9	2220.0	1219.0	30	25.22	92.6	1023.2	495.5
Կապան	1	0.40	186.8	186.8	186.8	6	3.20	120.0	841.6	285.5
Մեղրի						6	1.32	193.0	3000.0	593.3
Սիսիան	1	3.00	263.0	263.0	263.0	18	45.79	46.3	1977.4	290.8
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	14	24.37	45.0	420.0	103.5	38	18.42	125.0	10000.0	1527.2
Վայք	7	20.50	34.2	104.4	59.7	12	15.87	58.8	1430.7	506.3
Տավուշի մարզ										
Բերդ						18	4.23	213.3	3783.8	515.2
Իջևան	2	1.08	115.8	6000.0	3057.9	26	7.57	267.5	9454.5	1034.1
Նոյեմբերյան	1	0.41	312.2	312.2	312.2	46	22.40	46.7	7368.4	762.9

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2009թ. չորրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	8	8448.0	175.0	3080.0	420.0	87	76474.4	130.7	22200.0	2571.3
Ապարան						7	12386.0	124.1	609.6	255.1
Թալին						6	13837.0	63.2	1454.8	137.7
Ծաղկահովիտ						2	2140.0	60.0	214.3	77.8
Արարատի մարզ										
Արտաշատ	6	6410.0	535.4	540.5	537.7	43	47696.0	173.9	7140.3	892.3
Մասիս	4	1986.0	304.6	3003.1	1461.3	85	61301.0	187.5	25000.0	1217.2
Վեդի	2	2470.0	146.9	147.6	147.3	41	50397.0	126.1	5000.0	661.3
Արմավիրի մարզ										
Արմավիր	39	19573.0	290.4	1400.0	1299.7	71	84167.0	131.6	9090.9	1214.0
Բաղրամյան						4	4975.0	100.0	833.3	179.5
Վաղարշապատ						104	90664.0	197.4	26528.4	1534.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						12	10646.0	186.6	1084.3	445.9
Ճամբարակ	171	135290.0	102.0	261.1	127.0	10	8438.0	71.3	2286.2	133.5
Մարտունի	1	420.0	118.8	118.8	118.8	27	28890.0	119.3	5000.0	273.1
Սևան	7	7343.0	113.3	447.3	291.0	9	12054.0	240.0	3110.4	223.0
Վարդենիս						6	8491.0	72.5	987.2	148.1
Լոռու մարզ										

Ալավերդի						11	22730.0	114.3	1388.9	197.4
Գուգարք	6	6336.0	119.5	5983.6	1113.5	9	6826.0	77.9	14083.3	736.4
Սպիտակ	23	28010.0	48.9	509.1	201.6	182	209472.0	104.9	1348.3	194.0
Ստեփանավան	3	5658.0	75.6	564.4	235.2	4	3734.0	88.2	1666.7	140.8
Տաշիր						1	1030.0	45.3	400.0	76.6
Կոտայքի մարզ										
Արմավյան	30	17520.7	634.5	3484.5	2702.8	120	108088.4	264.5	35353.5	2041.0
Եղվարդ	14	11354.0	1617.0	3140.0	2800.3	84	69097.0	173.6	27000.0	2815.5
Հրազդան	3	2900.0	413.5	1265.4	779.8	20	16618.0	117.7	34848.5	1341.6
Շիրակի մարզ										
Ախուրյան	10	76462.0	154.0	4296.9	1822.2	16	12130.0	113.6	18750.0	330.4
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	3	1200.0	278.0	465.0	340.6	10	14820.0	67.9	180.6	120.5
Աշոցք								40.8	144.0	60.0
Արթիկ	6	3735.0	57.5	276.8	143.9	10	8490.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						3	3308.0	112.2	1700.0	291.1
Կապան						4	2470.0	67.9	2638.9	233.5
Մեղրի								68.5	632.9	145.8
Միսիան						4	2540.0	123.5	875.0	159.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	4	5601.0	134.2	757.5	547.4	15	14919.0	96.7	7659.6	400.9
Վայք						2	1500.0	120.7	1448.3	157.2
Տավուշի մարզ										
Բերդ						3	3907.0	75.8	810.0	96.5
Իջևան	31	24096.0	156.4	2674.1	1328.1	19	16012.0	74.1	14423.1	479.3
Նոյեմբերյան								125.0	1948.1	163.0

2009թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 28 գործարքներ 6.04 հա մակերեսով, ընդ որում 18-ը՝ /3.53 հա/ Լոռու, 9-ը՝ /2.37 հա/ Կոտայքի և 1-ը՝ /0.14 հա/ Շիրակի մարզերում:

2009թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3575 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.4%: Ընդ որում, վարձակալության գործարքների 87.9%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2009թ. չորրորդ եռամսյակում, 2009թ. երրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 8.3%-ով, իսկ 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 12.8%-ով:

2009թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 168 բնակարանների, 105 անհատական բնակելի տների, 1217 հասարակական, 282 արտադրական նշանակության օբյեկտների, 1596 միավոր /10394.67 հա/ հողերի և 207 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2009թ. չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 18 վարձակալության գործարքների, այդ թվում 3 միավոր /0.003 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2009թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել է 48.6%-ով, իսկ 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 64.0%-ով:

2009թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 10394.67 հա հողերից 27.73 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 10366.94 հա հողերի 2.59 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 27.36 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արարատի մարզում՝ 2546.66 հա, որից 2537.50 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 3388.79 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2009թ. չորրորդ եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	3	668.86	71	418.44
Արարատ	9	1544.32	107	993.18
Արմավիր	0	0.00	44	779.84
Գեղարքունիք	4	200.30	346	1197.46
Լոռի	2	5.00	44	227.73
Կոտայք	0	0.00	26	182.06
Շիրակ	5	253.00	346	454.84
Սյունիք	1	5.11	55	276.25
Վայոց Ձոր	1	712.20	69	559.76
Տավուշ	0	0.00	19	45.50
Ընդամենը	25	3388.79	1127	5135.06

2009թ. չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6782 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 14.1%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2009թ. երրորդ եռամսյակի համեմատ, աճել է 54.1%-ով, իսկ 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 21.0%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /43.5%/, առանձնատների /23.3%/, հասարակական նշանակության օբյեկտների /12.2%/ և հողերի /15.5%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2873 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2009թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 34.8%-ով, իսկ 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 30.7%-ով:

2009թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 1719.53 հա հողեր, որից 25.13 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 93.8%-ը, կամ 1613.14 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից 0.85 հա՝ Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արագածոտնի մարզում՝ 798.19 հա, որից 794.57 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2009թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 499 գործարքներ, որից 394-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքների 79.2%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 15.2%-ը՝ անհատական բնակելի տների, 1.8%-ը՝

հասարակական նշանակության օբյեկտների, 0.8%-ը՝ արտադրական նշանակության օբյեկտների, 0.6%-ը՝ այգետնակների, 0.4%-ը՝ ավտոտնակների, 2.0%-ը՝ հողերի և 0.6%-ը՝ գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ: 2009թ. երրորդ եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը աճել է 77.6%-ով, ընդ որում Երևանում՝ 86.7%-ով, մարզերում միասին վերցրած՝ 50.0%-ով, իսկ 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել է 68.0%-ով, ընդ որում Երևանում՝ 83.3%-ով, մարզերում միասին վերցրած՝ 28.0%-ով:

2009թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 3 և 4 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.01%: 2009թ. չորրորդ եռամսյակում, 2009թ. երրորդ եռամսյակի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 36.4%-ով, իսկ 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ՝ 58.8%-ով: 2009թ. չորրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների 28.6 % արձանագրվել է Շիրակի, 14.3-ական % Երևանում, Արարատի, Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում:

2009թ. չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 7259 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2009թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 14.8%-ով, իսկ 2008թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 0.4%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 15.1%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /30.7%/:

ԱԳՎՊԿ լրատվական ծառայություն